Tuesday 03 December, 2013



ԳԼԽԱՎՈՐ

Ընա

- Գլխավոր
- Քաղաքականություն
- Հասարակություն
- Աշխարհ
- Տնտեսություն
- Մշակույթ
- Սպորտ
- Հետաքրքիր է իմանալ
- Վիդեո
- Առեղծված

Հրապարակվել է: Tue, Sep 6th, 2011

Արխիվ / Հետաքրքիր է իմանալ |

Հայկական վիրտուալ համալսարանը 2 տարեկան է

Կիսվել

Հետևել RSS-ով

Թեզեր

Իր գործունեության ընթացքում Հայկական վիրտուալ համալսարանը ունեցել է ավելի քան 1000 ուսանող աշխարհի շուրջ 50 երկրներից: Այս երկու տարվա ընթացքում ՀՎՀ ստեղծել է հեռավար կրթական մի համայնք, որը խթանում է ինչպես մշակութային կրթություն, այնպես և սոցիալական շփում, երբ դրանք հասանելի չեն Սփյուռքի շատ երիտասարդներին:

«Մեր վիրտուալ դասարաններ արդեն այցելում են ուսանողներ Ճանհայից և Բուենոս Այրեսից, Երևանից և Վանկուվերից, Կիևից և Հաագայից, Ամմանից և Ռեունիոն կղզուց»,-նշում է ՀՎՀ հիմնադիր նախագահ Երվանդ Զորյանը:

Տարեդարձի առթիվ այսօր կայացել է սիմպոզիում, որին ներկայացվել են համալսարանի մեկ տարվա ձեռքբերումները: ՀՎՀ-ի նպատակն է ուսանողներին օգնել օնլայն կրթության միջոցով ձեռք բերել հայկական առարկաների հիմնարար գիտելիքներ: Այն առաջարկում է հայկական կրթության մի շարք սերտիֆիկացված ծրագրեր և կրեդիտավորված դասընթացներ՝ համալսարանի մակարդակով: Այդ սերտիֆիկատները եւ կրեդիտները կարող եք ձեռք բերել տանից, աշխատավայրից կամ ճամփորդության ընթացքում:

Այժմ ՀՎՀ-ում երեք ֆակուլտետ է գործում՝ լեզվի, պատմության և մշակույթի, որոնցից յուրաքանչյուրը տարբեր մակարդակների դասընթացների շարք է առաջարկում: Հայկական կրթության հարստությունը ողջ աշխարհում լիարժեք տարածելու նպատակով ծրագիրը ներկայացվում է 6 լեզվով՝ հայերեն (արևելահայերեն եւ արեւմտահայերեն), անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն և իսպաներեն: Աղբյուրը՝ Pcnews.am